ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ՄԻ ԲԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանելուկները վիպական ժանրի այլաբանական բնույթի ստեղծագործություններ են։ Նրանք ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից են և հազարամյակների ընթացքում ժողովուրդների հոգևոր կյանքում կարևոր դեր են խաղացել։

Բանահյուսական մյուս ժանրերի նման հանելուկները ևս հանդիսացել են օբյեկտիվ իրականության արտացոլման յուրահատուկ միջոց։ Լինելով էպիկական ստեղծագործություն, հանելուկը տարբերվում է այդ սեռի մյուս ժանրերից (էպոս, հեքիաթ, առակ...) նրանով, որ օբյեկտիվ իրականությունը դրսևորում է ծավալով փոքր այլաբանական ու փոխաբերական սեղմ բանաձևումների մեջ, իբրև բնության և հասարակական կյանքի առանձին կողմերի գեղարվեստական մանրանկարներ։ Հանելուկներում անդրադարձել են ժողովրդի պատմական ու աշխարհագրական միջավայրը, կենցաղը, սովորությունները, արտադրական գործունեության տարբեր տեսակները, աշխատանքի գործիքներն ու միջոցները, տնտեսության զանազան բնագավառները, սոցիալ-դասակարգային երևույթները և նրանց մասին ժողովրդի ունեցած ըմբռնումներն ու վերաբերմունքը։ Այս իմաստով էլ հանելուկները ճանաչողական ու պատմական կարևոր նշանակություն ունեն, իսկ իրենց յուրատեսակ արտահայտչաձևի պատճառով՝ ավելի քան ուշագրավ են դառնում։

Հայ ժողովուրդը աշխարհի բոլոր ժողովուրդների նման ունեցել է և ունի իր բազմապիսի մեծաքանակ հանելուկները, որոնք մինչև վերջին ժամանակները էլ բավարարում էին նրա հոգևոր պահանջները։ Բանահյուսական այդ հետաքրքիր ժանրի ուսումնասիրությունը հայ բանագիտության կարևոր խնդիրներից է, մանավանդ, որ այն բոլորովին հետազոտված չէ և կարոտ է բազմակողմանի ու ամբողջական ուսումնասիրման։

* * *

Հանելուկների, իբրև ժողովրդական բանահյուսության ժանրի, սկզբնավորումը վերաբերում է խոր հնադարին։ Հնագույն գրավոր հուշարձանների և բանավոր ավանդությունների մեջ պահպանված վկայությունները ցույց են տալիս, որ նրանք եղել են դիցաբանական հավատալիքների ու շրջապատի իրական աշխարհի գաղտնիքների մեկնաբանման տարածված միջոցներից։ Սակայն նրանք այդ աստիճանի վրա կանգնած չեն մնացել, այլ մարդկային բանականության զարգացման հետ մեկտեղ, կորցրել են իրենց սկզբնական դերն ու արժեքը և հետզհետե վեր են ածվել զվարճախոսության սրամիտ միջոցների։ Այդպիսին է հանելուկը արդի ժողովրդական բանահյուսության մեջ։

Սկզբնավորվելով իբրև առարկայական աշխարհի իրերի և երևույթների ներքին էությունը բացահայտելու ճանաչողության յուրատեսակ միջոց, հանելուկները դրսևորվել են որոշակի ձևի մեջ։

Հանելուկի «ամենապարզ և ամենահին ձևը,—գրում է գերմանացի գիտնական Ֆրիդրիխը,— հարցն է, որին պետք է պատասխան տրվի. այն անվանում ենք հարցհանելուկ (Rathselsfrage)»[1]։

[1] *Friedrich*, Geschichte des Rathsels, Dresden, 1860, էջ 4։

Ֆրիդրիխը հանելուկների բոլոր հնարավոր ձևերը բաժանում է ութ խմբերի.

1. Հարցհանելուկ. 2. Պարզ բառհանելուկ, որն իր հերթին բաժանվում է յոթ տարատեսակների. 3. Վանկհանելուկ. 4. Տառհանելուկ. 5. Գծանկարահանելուկ. 6. Պատկերահանելուկ. 7. Խճողվածահանելուկ (Das Complicirte Rathsel) և 8. Թվահանելուկ։

Բացառությամբ առաջինի, հանելուկների մնացած ձևերը, ըստ էության, ժողովրդական բանահյուսության հետ ոչ մի կապ չունեն։

Ժողովրդական հանելուկները, չնայած իրենց տարբեր դրսևորումներին, համախմբվում են մի ընդհանուր ոճական ձևի տակ, այն է՝ հանելուկային հարցի։

Ճիշտ է, նրանք մեծ մասամբ չունեն այլևս հանելուկների նախնական ձևի պարզությունն ու որոշակիությունը, սակայն բոլորն էլ պահպանել են հարցադրման եղանակը։

Այդպես են, օրինակ, հայկական հանելուկները։ Նրանց մեջ հարցադրման սկզբնական եղանակը իր դրսևորումն է գտել տարբեր հարցական բանաձևերի մեջ։ Ամենատարածվածներից են. «էն ի՞նչն է», «էն ի՞նչ ա, ինչը», «էտ ի՞նչ ի», «ի՞նչն ա, ինչ», «ի՞նչի», «էն ինչ թե ինչ», «էն ո՞վ էր»:

Բանահավաքներից ոմանք երբեմն հանելուկներ են հրատարակել առանց հիշյալ բանաձևային հարցումների։ Բայց այդ հանգամանքը դեռևս իրավունք չի տալիս ասելու, թե դրանք ասվել են առանց հարցմունքի։ Նամանավանդ, որ բանահավաքների մի այլ խումբ էլ ժողովրդական հանելուկները տպագրել է հարցական բանաձևերով, կամ էլ, եթե ավելորդ տեղ չզբաղեցնելու համար յուրաքանչյուր հանելուկի սկզբից այն չի գրել, այնուամենայնիվ պարտք է համարել ծանոթագրության կարգով հիշեցնելու դրանց գոյության մասին (Տ. Նավասարդյան, Գ. Աղաջանյան և ուրիշներ)։ Որ մեր ժողովրդի մեջ ամեն մի հանելուկ ասվել է որոշակի հարցումով, երևում է տարբեր բանահավաքների վկայություններից և մինչև այժմ տարբեր գավառներում պահպանված հանելուկներից։

Հանելուկ ասելիս, չնայած նրա նկարագրական բնույթին, ասացողը միշտ էլ ունկնդրին որոշակի հարցով է առաջադրում այն։

Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև դիմացինին առաջադրվում է առարկաների հատկանիշների ու գծերի ուղղակի կամ այլաբանական մի այնպիսի կոմբինացիա, որին տրամաբանորեն պետք է պատասխան տրվի։

Հարցադրման եղանակը հանելուկի ձևական առանձնահատկության ամենաընդհանուր արտահայտությունն է, որ գալիս է խոր հնությունից և կազմում է նրա բնորոշ գիծը։

Հետագայում որքան էլ փոփոխությունների է ենթարկվում նա, այնուամենայնիվ պահպանում է իր այդ սկզբնական էական առանձնահատկությունը, իրերի և երևույթների մասին հարցումը։

Հարցհանելուկը ժողովրդական հանելուկների ամենաընդհանուր և միակ ձևն է։ Ժողովրդական հանելուկներից էապես տարբեր են բոլոր այն հոգևոր խաղերն ու զվարճության միջոցները, որ կրում են «հանելուկ» ընդհանուր անունը։

* * *

Հանելուկը, ինչպես ասվեց, վիպական բանաստեղծության հնագույն և բաղկացուցիչ տարրերից է։ Սկիզբ առնելով խոր հնադարում, այն բնականաբար պետք է հանդես գար մարդկության գեղարվեստական հայեցումների արտահայտության նախնական ձևերի շրջանակներում։

Արվեստի հին ձևերից մեկը սիմվոլիկան է, որը ծագել է Արևելքում և հանդես է եկել ու պահպանվել հին հնդիկների, պարսիկների, եգիպտացիների մոտ՝ նրանց սուրբ գրքերի (Զենդ Ավեստա, Ռիգվեդա), հնամենի պոեմների (Ռամայանա, Մահաբհարաթա) և ճարտարապետական վիթխարի կառուցումների (բուրգեր, սֆինքսներ) մեջ։

Հանելուկը առնչվում է արվեստի այդ նախնական ձևի հետ։

Սակայն սիմվոլային արվեստի սկզբնական դրսևորումը՝ «չգիտակցված սիմվոլիկան» դեռևս հանելուկ չէր կարող առաջադրել, որովհետև հանելուկը ենթադրում էր որևէ ինչի իմացություն։ Հանելուկը իրավամբ դասվում է գիտակցված սիմվոլիկայի բնագավառում։ Այն ընդհանուրը, որ հանելուկը կապում է սիմվոլային արվեստի հետ, այդ նրա արտաքին կերպարի և ներքին իմաստի տարբերությունն է։

Սիմվոլի առանձնահատկությունն էլ այն է, որ մի կոնկրետ առարկայի միջոցով արտահայտելով մի ընդհանուր հասկացողություն՝ այդ առարկան կամ արտահայտության ձևը իր արտահայտած նշանակությունից մնում է տարբեր։

Ուստի հանելուկի առաջին ընդհանուր առանձնահատկությունը, որով և առնչվում է իսկական սիմվոլի հետ, նրա արտաքին կերպարանքի և բուն նշանակության միջև եղած տարբերությունն է։

Այդ տարբերությունն առաջանում է նրանից, որ հանելուկի մեջ ներքին նշանակությունը ձևոր է բերում ինքնուրույնություն, որով կապը իր արտահայտության կամ հանելուկային արտաքին պատկերի միջև խզվում է։

Այսպես օրինակ.

Մի տուն ունիմ, մեկ սյունանի,

Հարուր հազար տախտակ ունի (սունկ)։ ԷԱԺԱ 158*

կամ՝ Կովը բոանշի, ֆորը փախշի (հրացան)։ ԱՀ XI 101 և այլն։

Սրանց մեջ հանելուկային պատկերները (մեկ սյունանի տուն, կով-հորթ) բոլորովին տարբեր են իրենց արտահայտած բուն նշանակությունից (սունկ, հրացան)։

Սակայն պատկերի ու նշանակության այդ իրական բաժանումը այնուամենայնիվ ակնարկում է նրանց միջև մի ներքին կապակցություն։ Այդ նմանությունը պատկերի և նշանակության մեջ անմիջականորեն առկա չէ, այլ մասամբ գտնվում է մեր սուբյեկտիվ հայեցության մեջ։ Հանելուկ հորինողը նմանության գծեր է գտնում միմյանցից հեռու ընկած պատկերի և նշանակության միջև։ Այս իմաստով էլ հանելուկը դասվում է արվեստի համեմատելի ձևերի շարքը, որովհետև նրա արտաքին կերպարանքի և բուն նշանակության միջև սուբյեկտը համեմատության կարգով է նմանություն գտնում։ Այս մոմենտն է, անշուշտ, պատճառը, որ միևնույն հանելուկը հաճախ հանդես է գալիս տարբեր նշանակություններով։ Այլ կերպ ասած՝ միևնույն հանելուկը մի քանի այլ առարկաների վերաբերյալ է ասվում։ Այս դեպքում հանելուկ հորինողը նմանության գծեր է գտնում որևէ առարկայի և տվյալ հանելուկային պատկերի միջև, իսկ մեկ ուրիշը նմանություն է գտնում նույն պատկերի և բոլորովին այլ առարկայի միջև։ Այնպես որ միևնույն պատկերը կամ արտաքին ձևը հանելուկների մեջ կարող են արտահայտել տարբեր նշանակություններ, նայած ինչ կողմից է սուբյեկտը ընկալում դրանք։

Սա չի նշանակում հարկավ, թե այդ նմանությունները սոսկ սուբյեկտիվ հայեցողության արգասիր են։ Այդ նման գծերը, անպայման, այս կամ այն չափով օբյեկտիվորեն գոյություն ունեն հանելուկային պատկերի և նշանակության միջև։ Բայց դրանք այնքան ընդհանուր ձևով են արտահայտված, որ արտաքուստ դժվար են զատորոշվում։ Սուբյեկտիվ հայեցողությունը իր ճաշակի համապատասխան ընտրում է և առարկայի մնացած հատկանիշներից առանձնացնում այն կողմը, որը տվյալ դեպքում հետաքրքրում է իրեն՝ նմանություն տեսնելով նրա և հանելուկային պատկերի միջև։

Այդ նմանությունն է, որ պետք է հայտնաբերի հանելուկ լուծողը։ Եվ հանելուկները մեծ մասամբ լուծվում են, որովհետև նմանությունը պատկերի և նշանակության միջև այնուամենայնիվ օբյեկտիվորեն գոյություն ունի, չնայած որ այն սուբյեկտիվորեն է ընտրված։ Սուբյեկտիվիզմի մոմենտը դրսևորվում է հատկապես հանելուկ հորինելիս, ճիշտ այնպես, ինչպես առհասարակ արվեստի տարբեր տեսակները ստեղծագործելիս։

Հեգելը հանելուկը դասում էր գիտակցված սիմվոլիկայի տեսակների շարքը, և այդ այն պատճառով, «որ հանելուկ հորինողը պարզ ու ամբողջությամբ գիտե նրա նշանակությունը, մինչդեռ իսկական սիմվոլները անլուծելի են։

Հետևաբար, հանելուկի էական առանձնահատկություններից մեկը նախապես հորինողի կողմից նրա նշանակության իմացությունն է։

Հորինողը ազատ լինելով հանելուկի նշանակության ընտրության մեջ, նույնչափ ազատ է նրա արտաքին պատկերի կերտման գործում։

Նա հանելուկային պատկերի համար օգտագործում է «արտաքին աշխարհում մեզ նախապես ծանոթ առանձին բնորոշ գծերն ու հատկանիշները», որոնք «գտնվում են իրարից դուրս-ցրված»։

---

* Համառոտագրությունների բացատրությունը տե՛ս հոդվածի վերջում.

Հանելուկ՝ հորինողն, ահա, այդ տարատեսակ գծերն ու հատկանիշները վերցնում և դասավորում է այնպիսի ձևով, «որ նրանք իրենց անդուլպադրության շնորհիվ ավելի շատ են գարմացնում մեզ»[1]։

Գծերի ու հատկանիշների այդ սուբյեկտիվ ու միտումնավոր միացումը արտաքնապես ոչ մի իմաստ չի արտահայտում։ Սակայն ուշադիր նայելիս տեսնում ենք, որ «նրանք... այդ չափով էլ որոշակի ակնարկում են ինչ-որ միության գոյության, որի կապակցությամբ նորից իմաստ ու նշանակություն են ստանում նույնիսկ այն գծերը, որոնց վերաբերյալ թվում է, թե նրանք միանգամայն տարասեռ են և իրար միջև ոչ մի ընդհանուր բան չունեն»[2]։

Ուրեմն արտաքին աշխարհի տարատեսակ գծերի ու հատկանիշների համակցումը դառնում է հանելուկային պատկեր, որը չնայած իր արտասովորության, որոշակիորեն ակնարկում է որևէ առարկա, իր որոշ հատկանիշներով։

Ասենք օրինակ.

Մեր իրեմ տարեկան, ուղիս բազարը գնաց (դեղձի ծառ)։ ԱՀ XI 98

Պղինձը հալրմ ա, դմակը մնրմ (ոտ և ոտնաման)։ ԱՀ XI 105

Քանի կտրեմ կ'երկննա,

Քանի տաշեմ կը հաստնա (հոր)։ ՍՄ 318 և այլն։

Բերած օրինակների մեջ զուգադրված են մարդկային կյանքի ու կենցաղի այնպիսի գծեր, որոնք արտասովոր են և տարօրինակ (երբեք տարեկան մայր, որի որդին շուկա է գնում, պղինձն է հալչում, փոխանակ միջի դմակը, կտրելուց երկարում է և տաշելուց հաստանում)։ Ուշադիր դիտելիս հիշյալ արտասովոր երևույթների միակցումը իմաստ է ստանում և ակնարկում որևէ առարկայի որոշ հատկանիշներ։ Ահա այդ միությունը, այդ հանելուկային ցրված գծերի կրողը է հենց այն հասարակ պատկերացումը, այն լուծման բառը, որի որոշումը կամ գուշակումը... հանդիսանում է այն խնդիրը, որ մեզ առաջադրում է հանելուկը[3]։

Հեգելը հանելուկի լուծման երևույթը համարում է նրա քայքայումը։

«...հանելուկը իրենից ներկայացնում է սիմվոլիկայի գիտակցված կատակ,... որի արդյունքն այն է, որ նրա շարադրման եղանակը տանելով դեպի հանելուկային կոմբինացիայի գուշակումը, ինքն իրեն քայքայում է»[4]։

Այսինքն՝ հանելուկի հորինման մոմենտը սկիզբն է այդ կոմբինացիայի քայքայման, որովհետև հորինման տարբեր գծերի ու հատկանիշների միտումնավոր միավորումը ենթադրում է այն առարկան, որն ինքը հենց հանելուկի լուծումն է։

Այսպիսով, հանելուկը իրենից ներկայացնում է մի այնպիսի կոմբինացիա, որը բաղկացած է միմյանցից տարբեր երկու կողմից՝ հանելուկային պատկերից և ներքին նշանակությունից։ Հանելուկ հորինելիս առաջնային է նրա նշանակության իմացությունն է և ապա արտաքին աշխարհից վերցրած որոշակի գծերի ու հատկանիշների միջոցով հանելուկային պատկերի կերտումը։

Տարբեր լինելով իր նշանակությունից հանկերձ, պատկերը որոշակիորեն ակնարկում է նրա հատկանիշները, որը և դառնում է հանելուկի լուծումը։ Ըստ էության հանելուկը ինքն իր մեջ արդեն լուծված է, որովհետև հորինողը սկզբից ընտրում է նրա գուշակման ենթակա նշանակությունը։ Այլ կերպ ասած նախ լուծումն է ստեղծվում, հետո հանելուկը։

* * *

Արդ, ի՞նչ եղանակներով ու ձևերով է դրսևորվում հանելուկի պատկերի և նշանակության փոխհարաբերությունը։

Հանելուկ հորինողը որպեսզի ստեղծի բուն նշանակությունից տարբեր հանելուկային պատկեր, պետք է առավել խնամքով ուսումնասիրեր թարգմի հանելուկի՝ իրեն նախապես հայտնի նշանակությունը։ Այս նպատակի համար նա օգտվում է կերպավորման զանազան միջոցներից։ Գուշակման ենթակա հանելուկային պատկերի կերպավորման ամենատարածված եղանակը հայկական հանելուկներում այլաբանությունն է։

---

[1] Гегель, Сочинения, XII, էջ 405։

[2] Նույն տեղում, էջ 405—406։

[3] Նույն տեղում, էջ 406։

[4] Նույն տեղում։

Արտաքին աշխարհից վերցրած ծանոթ առարկաների հատկանիշներն ու գծերը կազմում են հանելուկային պատկերի այլաբանական առաղձը։

Հանելուկային այլաբանությունը առարկաների և երևույթների հատկանիշների այնպիսի դասավորություն է, երբ նրանց ներքին կապակցությունը, հանելուկի բուն նշանակությունից տարբեր, բոլորովին այլ գործողություն կամ երևույթ է արտահայտում։

Հանելուկային այլաբանական պատկերը իր բուն նշանակության հետ ունեցած փոխհարաբերության տեսակետից բաժանվում է մի քանի տեսակների։

ա) Այլաբանություն ըստ արտաքին նմանության.

Այս տեսակի պատկերը չնայած իր բնույթով բոլորովին այլ կարգի երևույթ է արտահայտում, այսուհանդերձ նրա և բուն նշանակության միջև մի արտաքին ընդհանուր գիծ է նկատվում։ Դա մեծ մասամբ արտահայտվում է պատկերի և նշանակության առարկաների կամ երևույթների վիճակի ընդհանուր նմանությամբ։

Օրինակ.

1 Զին կնաց. բամբ մրնաց (չուր և կամուրջ)։ ԴԻԱԹ

2 Երիկուներ դրի մաղ մը հավկիր.

Վանկուց չկար հիշ մեկ հատիկ (երկնքի յուսատուներ), և այլն։

Հանելուկներից առաջինի մեջ ջրի հոսելու հատկանիշը այլաբանվել է ձիու գնալու հետ։ Երկուսի մոտ էլ արտաքին ընդհանուր նմանությունը շարժման հանգամանքն է։ Երկրորդի մեջ երկնքի շրջանաձևությունը այլաբանվել է կլոր մաղի, իսկ աստղերը իրենց փոքրության ու բազմաբանակության պատճառով՝ ձվերի հետ։ Այս կարգի այլաբանական հանելուկները, առհասարակ, բավականին իմաստալից են և հաջող։

բ) Այլաբանության երկրորդ տեսակը կառուցված է հանելուկային և այլաբանական առարկաների ֆունկցիոնալ նմանության վրա։ Նման հանելուկները մեծ մասամբ իմաստալից են և գեղեցիկ։

Օրինակ.

1 Ալ եզ. բալ եզ. Բանի բուրձեմ. տար եզ (գզալ)։ ԷԱԺԶ 356

2 Ալ եզներ, պալ եզներ.

Շիվարած կայնած եզներ (տան սյուներ). ԷԱԺԱ 156

3 Անհոգի էշը անհոգ տանսի վերեն (նավի առագաստ)։ ՎԱԲ 154

4 Ամ շուներ պատեն կախ (կոզպեր)։ ԺԱԲ 66 և այլն։

Առաջին հանելուկի մեջ հանելուկի առարկան՝ գդալը իր մի բան կրելու, տանելու հատկության պատճառով է այլաբանվել եզի հետ։

Երկրորդի մեջ սյուները, տան ծածկը իրենց վրա կրելու պատճառով են դարձյալ փոխաբերվել եզների հետ, բայց քանի որ անշարժ վիճակի մեջ են գտնվում, ուստի եզները դարձել են «շիվարած կայնած», որով հանելուկային և այլաբանական առարկաների ներքին կապը իմաստավորվել է։

Նույն կրելու և տանելու հատկությունն է դարձյալ պատճառ հանդիսացել, որ երրորդ հանելուկի մեջ նավի առագաստը այլաբանվել է «անհոգի» էշի հետ, որ անհոգ տանիքի վրա է գտնվում։ Ընդգծված այլաբանական բացառումները նախորդի նման, պատկերի և նշանակության ներքին կապն են իմաստավորել։

4-րդ հանելուկի մեջ դուռը պահպանելու հատկանիշը հիմք է ծառայել կոզպերը շան հետ այլաբաներու համար։

Այսպիսով, տեսնում ենք, որ հանելուկ հորինողի կողմից որքան էլ քմահաճ ու սուբյեկտիվ մոտեցում ցուցաբերված լինի հանելուկի այլաբանական պատկերի ընտրության մեջ, այնուամենայնիվ որոշակի կապ ու փոխհարաբերություն է նկատի առնվում։ Եվ այդ կապն ու նմանությունն է պատճառը, որ հանելուկը թեև դժվարությամբ՝ գուշակվում է։

Հանելուկների արտաքին պատկերի և նրա բուն նշանակության մասին խոսելիս, մի ընդհանուր երևույթ ևս պետք է նկատի ունենալ։

Երբ հանելուկի առարկան գործողություն է, շարժուն վիճակ կամ պրոցես, ապա այլաբանական պատկերը նույնպես գործողությամբ կամ շարժմամբ է արտահայտվում, և հակառակը, երբ անշարժ առարկա է կամ վիճակ՝ այլաբանական պատկերը ստատիկ է, անշարժ։

Բայց շատ հանելուկների մեջ լուծման առարկաները թվում են անշարժ, մինչդեռ այլաբանական պատկերները գործողություն են ներկայացնում։

Օրինակ, վերևում բերած հանելուկները գդալի, փականքի մասին, ինչպես նաև հետևյալների մեջ.

Սև սիկը սարն ելավ,
Անճամբարֆը վեր եկավ (ածելի և մազեր)։ *ՀԺԱ 10*
Էրկու ծակեն սել (ճեղեղ) կը վազե,
Հինգ ախպարր տեմ կը վազե (ֆիր)։ *ԱՀ IX 179*
Էն ի՞նչն ա ինչ,— ճռանտը սարը բարձրացավ,
Ճագարավոր մարդ գլորեց (գերանդի)։ *ԳԻԱԱ և այլն։*

Հանելուկների մեջ շատ հաճախ առարկաները նկատի են առնվում ոչ թե իրենց արտաքին նկարագրով, իբրև սոսկ այդպիսիք, այլ իրենց կատարած հիմնական դերով։ Իսկ քանի որ հանելուկի առարկաները վերցվում են մարդու շրջապատի իրականությունից, ապա բնական է, որ դրանց մեծ մասը լինեն աշխատանքային ու կենցաղային զանազան գործիքներ ու իրեր, որոնք իրենց հիմնական ֆունկցիայով առնչվում են մարդու այս կամ այն գործողության հետ։

Վերոբերյալ հանելուկների առարկաները՝ փականքը, գդալը, ածելին, գերանդին, քիթը ոչ այլ ինչ են, քան փակելու, ուտելու, սափրելու, հնձելու և այլ գործողությունների հիմնական միջոցներ։

Հենց նրանց այս ֆունկցիաներն էլ նկատի են առնվել ժողովրդական հանելուկներում։ Հետևաբար այդ կարգի հանելուկների մեջ առարկան ինքը պրոցես կամ գործողություն է ցույց տալիս։

գ) Հանելուկային այլաբանության մյուս տեսակն այն է, երբ շրջապատի իրականությունից վերցրած գծերն ու հատկանիշները այնպիսի ձևով են զուգորդվում, որ հանելուկի այլաբանական պատկերը վեր է ածվում արտասովոր, անիրական, անտրամաբանական երևույթի կամ հասկացողության։

Նման այլաբանությունը կանվանենք՝ այլաբանություն հատկանիշների հակարնական զուգորդմամբ:

Այս տեսակը ստվար թիվ է կազմում հայ ժողովրդական հանելուկների ընդհանուր քանակի մեջ։ Բերենք մի քանի օրինակ.

1 Միսը վրեն, կաշին տակը (ճավի Fարանիկ)։ *ԳԻԱԲԱ 102*
2 Ամառը կպաղի, ձմեռը կրացվի (չորան)։ *ԱՀ IX 108*
3 Էն ի՞նչն ա, որ կապըմ ենf ման ա գալի,
վեր եճf բողըմ fընըմ ա (տրեխ)։ *ԱՀ XI 107*
4 Որոցfի մեջ ճինը տղա կան,
Որրեսՙ կուլան, բողեսՙ կմնաւ (սազ)։ *ԳԻԱՀ*
5 Մի աման ունեմ, որ դպա երկինքն եմ բռնում՝ դարտրկվում ա,
Որ դպա դետինն եմ բռնում՝ լցվում ա (գլխարկ)։ *ՀԺԱ 10*
6 Էն ի՞նչն ա ինչը, որ մորթվող ոչխարը յուղ չի բըրմ,
մորթող դասարն ա լաց բըրմ (սոխ)։ *ԱՀ XI 106*
7 Դավեն գնաց բաղնիf,
պոչը մնաց դուրսը (շերեփ)։ *ԷԱԺԱ 156*
8 Ձորանը սարին,
կյուշը կտուրին,
չոմաղը fմակումը,
խոխեfը փորումը (խաչխաշ)։ *ԳԻԱՆ*
9 Էն ի՞նչն ա ինչը, ուղտը չոfացրին,
մեջը նրազներ վարին (բոնիր)։ *ԳԻԱԱ և այլն։*

Բերած հանելուկների այլաբանական պատկերները բոլորն էլ իրական երևույթներին հակառակ են և նույնիսկ անտրամաբանական (7, 8, 9)։ Դրանց մեջ առարկաների հատկանիշները մեծ մասամբ դասավորված են հակառակ ձևով։

Իրական առարկաներին ու երևույթներին հակառակ հատկանիշների զուգորդումը հակասություն է առաջ բերում հանելուկի այլաբանական պատկերի և իրական առարկաների ու երևույթների միջև։ Այդ հակասության մեջ էլ դրսևորվում է հանելուկայինը՝ այն հանգույցը, որը լուծում է պահանջում։

Իրականի և հանելուկային այլաբանության տարբերությունը ունկնդրի մոտ ստեղծում է միանգամայն այլ առարկայի մտապատկեր, որի մեջ արդեն հատկանիշների դասավորությունը

թեև մոտավոր ճշտությամբ, համապատասխան է հանելուկի այլաբանական պատկերին։ Այդ էլ հանելուկի առարկան է կամ բուն նշանակությունը։

Օրինակ, 5-րդ հանելուկի մեջ այլաբանական պատկերը ներկայացնում է մի այնպիսի աման, որը շրջելիս լցվում է, և ուղիղ պահելիս դատարկվում։ Այս հակաբնական երևույթը ինքն է նշում նրա այլաբանություն լինելը և ունկնդրի մտքում առաջ է բերում այլ սեռի առարկաների մտապատկերներ, որոնք մոտավորապես օժտված են նույն կարգի հատկանիշներով։ Դրանցից ամենահամապատասխանը գլխարկն է, որը և հանելուկի լուծումն է։

Այսպես են նաև մյուս հանելուկները։ Այս առիթով ուշադրության է արժանի մի հանգամանք։

Իրական հատկանիշների հակաբնական զուգորդումը, որ կազմում է հանելուկի այլաբանական պատկերը, հաճախ ուղղակի կերպով չի մատնանշում այն առարկան կամ երևույթը, որի հատկանիշները դարձել են նրա կերպավորման աղբյուր։ Դրանք անուղղակի ձևով ենթադրվում են։ Վերևի 3-րդ հանելուկի մեջ այլաբանական առարկայի անունը չի նշված, սակայն հատկանիշների բնորոշ լինելու պատճառով ենթադրվում է, որ գրկի երեխան է նկատի առնվել։ Երկրորդի մեջ նույն հանգամանքների հետևանքով ենթադրվում է, որ այլաբանական առարկան սառույցն է։ Կամ հետևյալ հանելուկները.

1 Ցերեկը խփվում ա, գիշերը բացվում (լամպ)։ ԳԻԱԱ
2 Ծուն մր ընկա, կոլոտի, կոլոտի
իրկուն բերան բաց կիզա տուն (կոշիկ)։ ԲԳ 264
3 Կը խրտրտեմ՝ լաց կը լինի,
Տափին դնեմ՝ սուս կանի (սազ)։ ԺԱԲ 72 և այլն։

Բերված երեք հանելուկների մեջ էլ այլաբանական առարկաները չեն անվանված, բայց իրենց յուրահատուկ հատկանիշներով ենթադրվում են։

Առաջինի մեջ նկատի է առնվել աչքը, երկրորդի մեջ՝ շունը և երրորդում՝ ծծկեր երեխան։

Բերածից երևում է, որ որոշ հանելուկների այլաբանական պատկերի մեջ ոչ թե առարկաներից կտրված ասոկական հատկանիշներ են նկատի առնվում, այլ կոնկրետ առարկաներ։ Ըստ որում համեմատություն է անցկացվում հանելուկային կամ լուծման առարկայի և այլաբանական առարկայի միջև։

Այս հանգամանքը բխում է հանելուկային առարկաների կոնկրետությունից։

Յուրաքանչյուր հանելուկի լուծում նկատի է առնում կոնկրետ առարկա և ոչ թե առարկաների մի ամբողջ սեռ կամ վերացական հասկացողություն։

Ուստի կոնկրետ առարկան համեմատվում է մի այլ կոնկրետ, ուղղակի կամ հակառակ ձևով զուգորդված հատկանիշներով այլաբանական առարկայի հետ։ Եվ քանի որ հանելուկը արվեստի համեմատելի ձև է, ապա բնական է, որ այդ համեմատությունը լինի կոնկրետ։ Այդպես են բոլոր հանելուկները։

Այս իմաստով էլ սխալ են վարվել բոլոր այն բանահավաքները, որոնք տվյալ սեռի առարկաների որոշ հատկանիշների նույնությունը նկատի առնելով, հանելուկի տակ իբրև լուծում դնում են այդ առարկայի սեռի կամ տեսակի անունը[1]։

Հանելուկի արտաքին պատկերի դրսևորման այլաբանական եղանակը միակը չէ։

Առարկաների հանելուկային դիմակը ձևավորվում է նաև նրանց իրական հատկանիշների ճշմարիտ վերարտադրման միջոցով։

Օրինակ՝

1 Մեկը կանգնած խոսում ա,
Էրկուսը անդաձ ին դնում
Էրկուսն էլ մտիկ ին տալի (բերան, ականջներ, աչքեր)։ ԹՄԿ 117
2 Էտ ինչի, էրաս էս ինկյալի.
Կայնես էս կայնելի (ատվեր)։ ՓԳ X 44
3 Տյուսը կոկլեգ, մեշը պրպըրթոս (մասուր). ԳԻԱՇ
4 Տակե ջուր, վրան կրակ (ճարգիլե)։ ԲԱ 654
5 Ձորս կողմը ջուր, մեջտեղը ճուր (ճեշտանե)։ ԳԻԱՆ
6 Ամառը ճով տեղ ա սիրում, ձմեռը տաք տեղ (կատու)։ ԳԻԱԱ և այլն։

[1] Այսպես օրինակ.
Էն ինչն ա ինչ, դըսինը ուտենը, ներսինը թալենը (միրգ)։ ԳԻԱԱ
կամ՝ Մեր երեք ամսական, որդին բազար գնաց (բանջարեղեն) և այլն։

Այս կարգի հանելուկների մեջ այլաբանությունն իսպառ բացակայում է։ Քանի որ չկա այլաբանություն, չկա նաև այլաբանական առարկա։ Դրանց մեջ առկա են միայն իրական հատկանիշներ։ Հանելուկային ասույթ այդ հատկանիշները կրող առարկայի անվան բացակայության մեջ է։ Իսկ այդ առարկան ինքը հենց հանելուկի առարկան է կամ լուծումը։ Այս տեսակը իր արտահայտության եղանակներով տարբերվում է նախորդներից։ Սրանց մեջ հանելուկի արտաքին արտահայտությունը կամ պատկերը այլևս միջնորդված չէ մի ուրիշ առարկայով, այլ ուղղակի համապատասխանում է հանելուկի նշանակությանը։

Բերած հանելուկներից առաջինի մեջ անձնավորմամբ նշված են խոսելու, լսելու և դիտելու հատկանիշներ իրենց քանակական դրսևորմամբ, որով ճշմարտացի և ուղղակի վերարտադրված են մարդու բերանը, ականջներն ու աչքերը։ Երկրորդի մեջ ուղղակիորեն վերարտադրված է տվերի՝ մարդուն կառչած լինելու իրական հանգամանքը, իսկ մնացածները իրենց հանելուկային առարկաների ուղղակի և իրական նկարագրություններն են։

Վերևում տեսանք, որ հանելուկի հիմնական առանձնահատկությունը նրա պատկերի և նշանակության տարբերությունն է։ Մինչդեռ հիշյալ տեսակի մեջ այդ տարբերությունը վերացված է։ Հանելուկի երևույթն ու էությունը համապատասխանում են միմյանց։ Այն միակ օղակը, որ այդ տեսակը կապում է դեռ հանելուկի հետ՝ առարկայի անվան բացակայությունն է, որը դեռ առիթ է տալիս գուշակման։ Դրանք ավելի նոր ժամանակների արգասիք են, որոնց մեջ բացահայտ կերպով նկատվում է իսկական արվեստի տենդենցը՝ իմաստի և պատկերի համապատասխանեցման ձգտումը։

Սա արդեն հանելուկի զվարճալիքի վերածման արտահայտություններից է, որն իր բարձրագույն դրսևորմանն է հասնում իրենց մեջ լուծումը պարունակող հանելուկներում։

Հայ ժողովրդական հանելուկների մեջ հանդիպում են բավական թվով այնպիսիները, որոնք շուտասելուկի կամ բառախաղի նմանությամբ՝ իրենք անվանում են իրենց լուծումը։

Այսպես օրինակ.

1 Ինքը կլոր, մեջը ծակ.
Հիմար չլինես՝ կասես ակ (ակ)։ *ԳԻԱԲԿ*
2 Ալաս. փալաս. սնունը տամ չիմանաս (փալաս)։ *ԳԻԱԹ*
3 Խիցեր (ախաղաղ), խիցեր, տանսի խիցեր.
Ինքը կեռ, ճազին սիպեռ (ախաղաղ)։ *ՀԺԱ 11 և այլն։*

Սրանց մեջ արդեն հանելուկի բնորոշ հատկանիշները գրեթե բացակայում են. հանելուկի պատկերի և նշանակության միջև այլևս ոչ մի տարբերություն չկա. պատկերն ինքը հանելուկի իմաստն է։

Այստեղ հանելուկի միայն հեռավոր նմանություն կա. այդ այն է, որ հանելուկի ձև է կրում և դրանով իսկ ունկնդրի մոտ ակամա հանելուկի պատրանք առաջացնում։

Այս երևույթն արդեն հանելուկի քայքայումն է։

Այսպիսով, հանելուկի նշանակության և նրա արտաքին պատկերի միջև գոյություն ունեցող կապն ու փոխհարաբերությունը դրսևորվում է ամենից առաջ հանելուկային առարկայի (=նշանակության) իրական որևէ հատկանիշի կամ հատկանիշների վերարտադրման ձևով։

Այդ հատկանիշները հանելուկային պատկերի մեջ են դրսևորվում երկու հիմնական եղանակներով.

ա) միջնորդված — *այլաբանական պատկեր ունեցող հանելուկների մեջ, որտեղ նրանք հանդես են գալիս այլաբանական առարկայի հատկանիշների միջոցով՝ նրանց համեմատությամբ կամ հակադրությամբ։*

բ) անմիջականորեն, ուղղակի — *ոչ այլաբանական պատկեր ունեցող հանելուկների մեջ, երբ պատկերը ինքը հանելուկային առարկան է կամ նրա որևէ հատկանիշը։*

Վերևում տեսանք, որ հանելուկների այլաբանական պատկերը կառուցված է արտաքին աշխարհում սփռված մեզ ծանոթ իրերից ու երևույթներից վերցրած որոշ հատկանիշների հիման վրա։ Այս իմաստով հանելուկը հատկանիշների յուրահատուկ դուգորդումն է։ Արդ, հանելուկի պատկերի կամ կերպարի կառուցման մի քանի էական սկզբունքներ պարզաբանելու համար, տեսնենք

ա) հիմնական ինչ կարգի հատկանիշներ են դառնում հանելուկային կերպարի ատաղձ.

բ) ինչ կոնկրետ կապ կա հատկանիշների տեսակների և հանելուկների նշանակությունների կամ լուծման առարկաների միջև։

Յուրաքանչյուր իր կամ երևույթ ունի իր որակական որոշակիություն, այն էական գիծը, որով նա տարբերվում է շրջապատի իրականության բազմազան ու բազմաքանակ առարկաներից ու երևույթներից։ Որակական այդ ներքին որոշակիությունը դրսևորվում է հատկանիշների յուրատեսակ կոմպլեքսի մեջ, որն իր ամբողջականությամբ բնորոշում է տվյալ առարկան։

Բայց այդ հատկանիշները միատարր ու միարժեք չեն։ Առարկայի ներքին որակի հետ ունեցած հարաբերության տեսակետից նրանք բաժանվում են էական և ոչ էական խմբերի։

Էականն այն է, որն իր գոյությամբ պայմանավորում է առարկայի որակը. բավական է վերանա այդ հատկանիշը և իրը կդադարի այդ իրը լինելուց, կվերածվի մի այլ որակի։ Մինչդեռ ոչ էական կամ երկրորդական հատկանիշների վերանալուց առարկան չի կորցնում իր որակը և մնում է նույնը։

Քանի որ հանելուկը իրերի և երևույթների հատկանիշներ է վերարտադրում, ապա հետաքրքիր է պարզել դրանց տեսակը։

Ժողովրդական հանելուկների սովոր մասը այլաբանորեն կամ ուղղակի վերարտադրում է հանելուկային առարկայի երկրորդական կամ ոչ էական հատկանիշները։ Այս հանգամանքը պատահական չէ։

Հանելուկ հորինողը միշտ ձգտում է մթագնել նրա նշանակությունը, որպեսզի լուծումը ավելի դժվարացվի։ Մինչդեռ առարկայի էական հատկանիշը վերարտադրելիս հանելուկի նշանակությունը շատ կպարզվի ու լուծումը կհեշտանա, և դրանով իսկ նրա խորհրդավորությունը կվերանա և այլևս չի ծառայի իր նպատակին։ Այս է պատճառը, անշուշտ, որ արտաքին աշխարհից ընտրվում են այնպիսի գծեր, որոնք մատնանշում են հանելուկային առարկայի ընդհանուր կարգի ոչ էական հատկանիշները։ Այս ընդհանուր և ոչ էական բնույթի պատճառով էլ հանելուկի գուշակումն ավելի դժվարանում է։

Մյուս կողմից, դարձյալ նույն ընդհանուր բնույթի հետևանքով, այդ հատկանիշները կարող են հեշտությամբ վերագրվել այլ առարկաների, և այդ երկվությունն ինքնին ավելի է խճողում ու թաքցնում հանելուկի բուն նշանակությունը։

Բացի այս սուբյեկտիվ մոմենտից, պետք է նկատի ունենալ մի այլ՝ օբյեկտիվ հանգամանք։

Մարդու գեղարվեստական հայեցումների նախնական շրջանում, շրջապատի իրականության առարկաներն ու երևույթները աշխարհը դեռևս նոր ճանաչել սկսող մարդու վրա թողնում էին սոսկ արտաքին ընդհանուր պատկերի տպավորություն։ Այստեղից սկսում է ծայր առնել մարդու պատկերավոր մտածողությունը բնության իրերի և երևույթների մասին։

Մտածողության այդ ձևը, որ միշտ էլ հարատևել է, դրսևորվում է նաև ժողովրդական հանելուկների մեջ, դառնալով նրանց այլաբանական պատկերի վերարտադրման կարևոր եղանակներից։

Ահա հանելուկային առարկաների արտաքին, առաջին հայացքից ապավորվող ընդհանուր, ոչ էական հատկանիշներն են, որ պատկերավոր ձևով ընկալվում են և վերարտադրվում հանելուկի մեջ։

Հետևաբար, մյուս կողմից, առարկաների և երևույթների ոչ էական, ընդհանուր, արտաքին հատկանիշների վերարտադրումը առնչվում է պատկերավոր մտածողության և իրերի ու երևույթների գեղարվեստական ընկալումների ընդհանուր տրադիցիաների հետ։

Ժողովրդական հանելուկների մեջ ընդհանրապես և հայկական հանելուկներում մասնավորապես, առարկաների բազմակողմանի բնութագրումներ չեն տրվում։ Նրանց մեջ նկատի է առնըվում առարկայի մի որևէ կողմը կամ հատկանիշը, որ ինչպես ասվեց, ոչ էական, երկրորդական նշանակություն ունի։ Այդ միակողմանի վերարտադրությունն է պատճառը, որ միևնույն առարկայի վրա ասվում են տարբեր հանելուկներ, որոնցից յուրաքանչյուրի մեջ հաշվի են առնվել առարկայի այս կամ այն կողմը։ Հետևաբար նույն առարկային վերաբերող տարբեր հանելուկները առարկայի տարբեր հատկանիշներն են մատնանշում։

Օրինակ, ընկույզի մասին մի քանի հանելուկ է ասվում. դրանցից յուրաքանչյուրի մեջ նկատի է առնվել ընկույզի երկրորդական որևէ հատկանիշը.

1 Բացրիցը վեր ընգաւ, ճիճ գյակս կռավ: *ԱՀ XI 99*

2 Մի թոռն, Էրկու ճաց, մի ճերինչ: *ԱՀ XI 99*

3 Մուրր մառան, ջուխտ ավետարան: *ԱՀ XI 99 և այլն։*

Առաջինի մեջ նկատի է առնվել հասունացած ընկույզի ծառից վայր ընկնելու և կանաչ կեղևից զրկվելու երևույթը, երկրորդում՝ ընկույզի միջուկի երկփեղկված լինելը, երրորդի մեջ առկա է նույն միջուկի մի այլ պատկերավոր ընկալումը։

Կամ՝ նռան մասին ասվող հետևյալ հանելուկները.

1 Նեղիկ, կլորիկ, մեջը հյունով լիք։ *ԳԻԱՀ*

2 Շուկայեն առա մեկ–մեկ, տուն տարա հազարումեկ։ *ԲԳ 451*

3 Աստված կշարե, մարդը կքակե։ *ԲԱ 654*

Առաջինում հաշվի է առնվել փոքր կեղևի մեջ նռան կլոր հատիկներ պարունակելու երևույթը. երկրորդում՝ մեկ նռան մեջ բազմաթիվ հատիկներ գտնվելը. երրորդի մեջ նռան հատիկների բնական շարվածքը մարդու կողմից քանդելը։

Հանելուկի մեջ արտահայտվում է առարկայի այս կամ այն կողմը կամ հատկանիշը, որ մեծ մասամբ առարկայի համար ոչ լական, երկրորդական նշանակություն ունի. բնական է, որ նա ունենա նաև իր արտահայտության որոշակի ձևերը՝ թեպետ ոչ ընդհանրական ու վերջնական իմաստով։

Տարածված ձևերից է առարկայի որոշ կողմերի կամ հատկանիշների քանակական դրսևորումը՝ բառիս ամենալայն առումով։ Այն արտահայտվում է մի քանի ենթաձևերով։ Ամենապարզ ենթաձևը առարկայի հատկանիշների թվական արտահայտությունն է։ Օրինակ

1 Չորս կոխիչ, չորս կախիչ, երկու խփիչ, մեկ պտտիչ (կով)։ *ԼՍԱ 316*

2 Հիրսուն տուն մեկ սան վրա (վայրի մեղվի բույն)։ *ԷԱԺՁ 346*

3 Էն ի՞նչն ա, մին քիր օնի, քառսուն աչք (տրեխ)․ *ԳԻԱՆ*

4 Մին փոսի եռա, հյարուր փոս (մատնոց)։ *ԳԻԱՇ*

5 Մեկ թիզ արտ—ծայրե ծայր, մեջն բուսած ա հազար ծառ (գլուխ)։ *ԵԱ 125*

6 Էն ի՞նչն ա—ինքը մին ա, միջինը հազար ու մին (ամերուկ և կորիզներ)։ *ԳԻԱՀ 39 և այլն։*

Բերված հանելուկների մեջ նկատի են առնվել առարկաների ընդհանուր բնույթի արտաքին ձևական հատկանիշները ըստ իրենց թվական արտահայտության։ Նրանցից մեծ մասը (2—6) կառուցված է միավորի և բազմակիի հակադրամիասնության վրա։

Հատկանիշների քանակական արտահայտության մյուս ենթաձևը չափի կամ տարածականության դրսևորումն է։ Հանելուկների այդ տեսակի հիմնական մասը կառուցված է մեծի ու փոքրի հակադրամիասնության վրա։ Այսպես օրինակ.

1 Աշխարհի հորը հասնի կու, հավի պոչին չկարի հասնիլ (ճանապարհ)։ *ԱՏ 83*

2 Մի ծիտ, մի տուն կը պահե (բանալի)։ *ԳԻԱՆ*

3 Ինք նուշ մի, զորքե տուն մի (ճրագ և լույս)։ *ԲԳ 452*

4 Բռնեմ բռնովս մին, վեր բողամ աշխարհովս մին (աչք)։ *ԱՀ XI 96*

5 Էն ի՞նչն ա ինչը—ծիուց բացրն ա, շանիցը ցած (ծիու թամբ)։ *ԳԻԱՀ 38*

6 Այն ի՞նչ է, ուղտից մեծ է, ծվից փոքր (ընկույզ)։ *ԳԻԱՆ*

7 Էն ի՞նչն ա ինչը—պրից մանղրանըմ ա, ամպից բացրանըմ (ծուխ)։ *ԳԻԱՀ 42 և այլն։*

Բերած հանելուկներից վերջին երեքի մեջ հակադիր հատկանիշները (մեծ-փոքր) երևան են գալիս առարկաների տարբեր պայմանների մեջ գտնվելու հետևանքով։

Պատահում են նաև այնպիսի հանելուկներ, որոնց մեջ առարկայի մի քանի հատկանիշներ հանդես են գալիս միաժամանակ։ Նման հանելուկները, որոնց քանակը շատ չէ, ամբողջական պատկերացում են տալիս լուծման առարկայի մասին։ Բերենք մի քանի օրինակ.

1 Վրեն փետ, տակը քար, տասը ոտ, իրեք գլուխ (կամ, եզներ, կալվոր)․ *ԳԻԱԲԱԴ 51*

2 Էն ի՞նչն ա ինչ—վերևը քար, ներքևը քար՝ մեջը հազար գլուխ կար (րաղնիք)։ *ԳԻԱԱ*

3 Դռսիցը խաս ա, միջիցը հզար (նուռ)։ *ԱՀ XI 105 և այլն։*

Սրանց մեջ առկա են որակական և քանակական հատկանիշների զուգորդումներ, որոնք առավել ամբողջական են ներկայացնում հանելուկային առարկան։ Հայ ժողովրդական հանելուկների մի փոքրիկ խումբ կա, որի մեջ առարկայի իրական և այլաբանական հատկանիշների զուգադրումներ են կատարվել։ Այդ տարատեսակ հատկանիշների համադրմամբ հանելուկը ձեռք է բերում արտասովոր ու յուրօրինակ բնավորություն, որն իր ձևով զարմացնում է լսողին։

Այսպես օրինակ.

1 Դոմ մի ունիմ, հազար գլոխ օչխար կը տանի, մեկ խիլ խոտ չտանի (մրջնի բույն)։ *ԷԱԺՁ 344*

2 Սաղ վախտը ոտի վրա ա ման գալիս, սատկելուս գլխի (փափախ)։ *ԳԻԱԱ*

3 Քանի սաղ էր՝ խոտ ու դարման էր ուտում, որ մեռավ՝ գինի էր խմում (գինու տիկ)։ *ՀԺԱ 18 և այլն։*

Սրանց մեջ իրական առարկաները կամ նրանց որոշ հատկանիշներ («մեկ խիլ խոտ», ոչխարի «սաղ վախտը ոտի վրա ման գալը», այծի «սաղ վախտ խոտ ու գարման ուտելը») զուգորդված են այլաբանական հատկանիշների կամ առարկաների հետ («հազար գլոխ ոչխար տանող գոմ», սատկած ժամանակ գլխի վրա ման գալ, մեռած ժամանակ գինի խմել)։

Իրական և այլաբանական հատկանիշների այս զուգակապն էլ ստեղծում է արտասովորություն և հանելուկային դիմակ։

Միևնույն առարկայի մասին ասվող տարբեր հանելուկներին հակառակ, միևնույն հանելուկը կարող է ասվել տարբեր առարկաների վրա։

Այս դեպքում նկատի է առնվում առարկայի մի այնպիսի կողմը, գիծը կամ հատկանիշը, որը շատ ընդհանուր ոնույթ է կրում և այդ ընդհանրության պատճառով էլ կարող է վերաբերվել մի քանի առարկաների։

Օրինակ.

1 Ալալա, բալալա, տար խաղ աբա, բեր կախ աբա (մաղ)։ ԺԱԲ 72

Նույն հանելուկը անփոփոխ կամ աննշան փոփոխություններով ասվում է զանթարի (=ջրլուծ, ԵԱ 123), թմբուկի, սազի (ՀԺԱ 10) վրա։

Հիշյալ առարկաները, բացառությամբ վերջին երկուսից, սեռի, տեսակի կամ ֆունկցիայի իմաստով, միմյանցից շատ հեռու են։ Այդ տարատեսակ առարկաների մեջ միակ ընդհանուր գիծն այն է, որ դրանք բոլորն էլ օգտագործվում են մարդու կողմից և ապա պատից կամ առաստաղից կախվում։

Տարբեր առարկաների այս ձևական կողմի ընդհանրության պատճառով է միևնույն հանելուկը ասվել տարբեր առարկաների վրա։

2 Ասղին դար, անղին դար, մեջը կա անղադար (լեզու)։ ԲԴ 135

Այս հանելուկը բարբառային աննշան փոփոխություններով, տարբեր գավառներում ասվել է գետի (ԱՀ IX 108), օրորոցի (ԷԱԺՋ 345), խմորի կամ լվացքի տաշտի (ԳԻԱԱ), թրի (ԲԴ 470) վերաբերյալ։

Հանելուկային այս տարատեսակ առարկաների ընդհանուր գիծը շարժունակությունն է, որ սահմանափակվում է երկու կողմից արգելքներով։

3 Ես ու Ջիջոն զացիր սար, Ջիջոն չրեղի (չլիներ) կը մներ սար (լազան=փայտե ոտնոց)։ ԲԴ 696

Նույն հանելուկը ասվում է նաև ձեռնափայտի, աչքի, ոտքերի (ԷԱԺՋ 345) վերաբերյալ։

Դրանց մեջ նկատի է առնվել տարբեր հանելուկային առարկաների մարդու համար օգտակար լինելու հանգամանքը։

4 Տղա մը ունիմ, կերբա կոյրվի, կոյրվի, կիզե բիմին (դրամաչափ), մի տեղ կտոնն կը նստի (տեզ, նիզակ)։ ԲԴ 451

Այս նույն հանելուկը մասնակի փոփոխություններով ասվում է նաև շան (ԾՏ 1907, 393), պավազանի (ԾՏ 1907 393), կոշկի (ԲԴ 264) վրա։

Այն ընդհանուր գիծը, որ երևան է գալիս այդ տարասեռ առարկաների մեջ՝ երկար թափառելու և երեկոյան տանը մի փոքրիկ տեղ գրավելու հանգամանքն է, որ հանելուկային փոխաբերության նյութ է դարձել։

Վերը շարադրածից հետևում է, որ ժողովրդական հանելուկները, ըստ իրենց կառուցվածքի, բաղկացած են երկու միմյանց պայմանավորող մասերից՝ հանելուկային պատկերից և նրա բուն նշանակությունից։

ՀՈԴՎԱԾՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԱՀ IX — Ազգագրական հանդես, գիրք IX։
2. ԱՀ XI — Ազգագրական հանդես, գիրք XI։
3. ԱՏ — «Ararat», ամսագիր, 1895։
4. ԲԱ — «Բյուրակն», շարաթաթերթ, Կ. Պոլիս, 1898։
5. ԲԲ — «Բյուրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899։
6. ԲԴ — «Բյուրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1900։
7. ԳԻԱԱ — Մ. Աբեղյանի անվ. Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիվ, Դ. Աղազատյանի ֆոնդ։
8. ԴԻԱԲԱ — Նույն տեղ, Վ. Բդոյանի ֆոնդ, «Ֆոլկլորը Ախուրյանի շրջանում»։

9. ԳԻԱԲԱՂ — Նույն տեղ, Վ. Բդոյանի ֆոնդ, «Ֆոլկլորը Աղինի շրջանում»։
10. ԳԻԱԲԲ — Նույն տեղ, Վ. Բդոյանի ֆոնդ, «Ֆոլկլորը Բոգդանովկայի շրջանում»։
11. ԳԻԱԲԿ — Նույն տեղ, Վ. Բդոյանի ֆոնդ, «Ֆոլկլորը Բոգդանովկայի շրջանում»։
12. ԳԻԱԹ — Նույն տեղ, Գ. Թարվերդյանի ֆոնդ։
13. ԳԻԱՀ — Նույն տեղ, Մ. Հակոբյանի ֆոնդ, «Լոռվա ֆոլկլոր»։
14. ԳԻԱՀՋ — Նույն տեղ, «Հանելուկներ և ջանգյուլումներ Լենինականի»։
15. ԳԻԱՆ — Նույն տեղ, Տ. Նավասարդյանի ֆոնդ։
16. ԳԻԱՇ — Նույն տեղ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ։
17. ԵԱ — Երգեր, հանելուկներ, թերահավատություններ... խոտրջրո, Գավառացի, Տփխիս, 1903։
18. ԷԱԺԱ — Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Ա, Մոսկվա — Ալեքպոլ, 1901։
19. ԷԱԺՋ — Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Ջ, Մոսկվա-Վաղարշապատ, 1906։
20. ԹՄԿ — Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Գ. Տեր Ալեքսանդրյան, մասն Ա, Թիֆլիս 1885։
21. ԺԱԲ — Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, ժողովեց Տիգրան Վարդանյանց, Թիֆլիս, 1900։
22. ԼԵԱ — «Լուսա», գրական հանդես, Ե տարի, 1900, գիրք Ա։
23. ՄՏ — «Մաղիկ», շաբաթաթերթ, տղոց և դպրոցականներու հատուկ, Կ. Պոլիս, 1907։
24. ՀԱՄ — «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1930։
25. ՀԺԱ — Հայ ժողովրդական ավանդություններ, ժողովածու Տիգրանա Նավասարդյանց, առաջին գիրք, Երևան, 1883։
26. ՍՄ — Մանանա, ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս, 1876։
27. ՎՍԱ — Վանա Սազ, Ա մաս, ժողովեց Գեորգ Գ. Շերենց, Թիֆլիս, 1885։
28. ՎՍԲ — Վանա Սազ, Բ մաս, ժողովեց Գեորգ Գ. Շերենց, Թիֆլիս, 1899։
29. ՓԳ — «Փորձ», միամսյա հանդես, Տփխիս, 1879։

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ НАРОДНЫХ ЗАГАДОК

С. Б. АРУТЮНЯН

(Резюме)

Рассматривая загадку в ее историческом развитии как древнейший жанр народно-поэтического творчества, автор статьи находит, что первоначальным видом загадки была вопрос-загадка, существенный признак которой сохранился в армянских загадках как вопрошание о предметах и явлениях внешнего мира. Вопрос-загадка сопровождалась различными вопросительными формулировками.

Считая загадку формой сознательной символики, автор свое основное внимание обращает на взаимную связь ее внутреннего значения и внешнего выражения или образа, подробно разбирая различные способы выражения этого своеобразного соотношения. Они в основном выражаются в двух видах: а) в опосредованном — в загадках, имеющих иносказательный образ, в которых разгадка выражается признаками иносказательного предмета, путем сравнения или сопоставления; б) в непосредственном — в загадках, имеющих неиносказательный образ, когда образ сам по себе является предметом разгадки или одним из его признаков.

Загадки, в основном, воспроизводят признаки второстепенного или общего характера действительных предметов или явлений, благодаря чему создается двусмысленность и затрудняется их решение.